

Հու, զոր ԼՈՒ մտեալ վնաս արարին եւ օճիրս
 գործեցին :

Զայս ամենայն լուեալ մեծամեծաց եւ իշ-
 խանաց Լէհու՝ ազդ արարին թազաւորին
 15 իւրեանց, թէ Թուրք եւ Թաթարք գան. եւ նա
 Հրամայեաց զօրս ժողովել եւ զնալ ընդգէմ
 թշնամեաց. եւ ԻՌԻ Սաղախի զնալ ծովով. որ
 եւ աւիրեցին բազում քաղաքս, զիւզս եւ ա-
 ւանս եւ զամուր բերթերս տապալեցին եւ բա-
 20 զում աւարս առին ոսկոյ եւ արծաթոյ. այլ եւ
 փարթամ Տաճիկս զերի տարան :

Պուղտանաց պարոնն եւ Ղարաֆլախին
 աղստամբեցան խօնթքարէն. նաեւ Մաճրի
 պարոնն երզմամբ ուխտ եւ դաշինք եղ Հեա
 25 Վլատիսլաւի՝ միաբանիլ եւ ծեծել զԹուրքն.
 որ ունէր ԼՈՒ հոգի երկաթակուռ պահատուր.
 իրեք տեղ բանակ դրին : Զոր լուեալ Թուր-
 քաց թէ պարոնն Օլախաց դարձաւ, ուղարկեց
 այլ պարոն, որ կոչէր Վատիլ Լուբուլ. եւ ինքն
 30 յԱտրանայ դարձաւ Ստամպոլ եւ Մուրղազայ
 վազիրին ասաց հաշտիլ : Զոր նա գեսպան
 առաքեաց առ Հէթմանն վասն սիրոյ. զոր յեա
 բազում երթեւեկութեան եւ պարզեւացն եւ
 ճիոցն ազնիւ՝ հաշտեցան եւ եղեւ խաղաղու-
 35 թիւն մեծ : Եւ Թուրքի մեծ էլչի եկաւ Շահին
 ազայ հարիւր հոգով եւ տեսեալ զօրքն Լէհու
 դարմացաւ որ զուտր զրեհ եւ երկաթ էր. եւ